№ 181 Սեպտեմբերի 30 (Հոկտեմբերի 12) 1881 Սեպտեմբերի 30 (Հոկտեմբերի 12) № 181

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միջոյն խմբագրատան մէջ։
Գաւառացիներից պիտում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար. վճարում է 6 կ.
իրաւանցիներից բացի 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր մտքեր և հին սերունդ։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Շամախուց։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Հայոց խնդիր։ «Новое Время» լրագրի թղթակցութիւն։ Անգլիա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՆՈՐ ՄՏՔԵՐ ԵՒ ՀԻՆ ՍԵՐՈՒՆԴ

—

Տաս տարի է որ գոյութիւն ունի մեր լրագիրը, տասս տարի է որ մենք ջանում ենք ցոյց տալ այս կամ այն դիպուածում մեր հասարակութեան մէջ գործող անձանց գեղծումները, մեր մէջ եղած հասարակական, ազգային հաստատութիւնների պակասութիւնները։ Բայց պէտք է խոստովանվենք, որ մեր այդ աշխատանքից որ և է պտուղներ մինչև այժմ չենք նշմարում։

Յայտնել հասարակական պակասութիւններ, մատակել անիրաւութիւններ, մերկացնել գեղծումներ,—այն հեռևանք պէտք է ունենայ, որ մարդիկ փոխվին, դրսևին, հաստատութիւնները բարւոքվին։ Բայց այդ տեսակ հեռևանքին կարելի է հասնել այն տեսակ հասարակութեան մէջ, որտեղ գործող անձինք գիտեն թէ իրանց պարտաւորութիւնը չը կատարած ժամանակ նրանց տեղերը կը բռնեն ուրիշները, աւելի լաւերը։ այն ժամանակ նրանք զգոյշ կը լինեն և կաշխատեն դրսևվել։ Իսկ երբ որ գիտեն թէ բացի նրանցից ուրիշ գործողներ չը կան, ամեն բան իրանց և իրանց նմանների ձեռքումն է և ինչպէս ասում է ռուսաց առածը „մի ձեռք միւս ձեռք է լուանում“, այն ժամանակ ինչքան կամենաք գրեցէք, մերկացրէք անիրաւութիւնները, մատակեցէք պակասութիւններն ու գեղծումները,—ձեր երեսին կը ծիծաղեն միայն, լաւ գիտենալով որ հասարակական ամեն ֆակտորները, ամեն օրգանները, ամեն հաստատութիւնները իրանց ձեռքումն է և հասարակութեան մէջ չը կան մարդիկ էլ որ իրանց փոխարինեն։ Նրանցից, որոնց մասին գրվում է, բաղկացած է ամբողջ հասարակութիւնը։ Իսկ նրանք, որոնք գրում են, չունեն իրանց համար մի կուսակցութիւն։

Այդ պատճառով մարդը, տաս տարի գործելուց յետոյ, հասնում է այն տխուր եզրակացութեանը, թէ զուր են, ապարդիւն են իր ջանքերը խիստ քննադատութեամբ փոխել հասարակական ներկայ երեւոյթները, քանի որ այժմեան սերունդը գոյութիւն ունի։

Մնում է միայն մի բան. սերմանել ժողովրդի մէջ առողջ գաղափարներ, ապագայ սերունդը կրթելու համար։ Ներկայ սերունդը կանցնի, իսկ մեր այժմեան սերմանած մտքերը կը բուսնեն և կաճեն ապագայ սերունդի սրտերում և կը բերեն այն պտուղները, որ չը կարողացան արդիւնաբերել այժմեան անսիրտ և փչացած սերունդի մէջ։

Ներկայ սերունդի պակասութիւնները, անիրաւութիւնները, գեղծումները և յանցանքները քննադատել, մերկացնել, մատակել,—ապարդիւն ջանք է յայտնվում։

Բայց շարունակենք մեր գործը, մխիթարելով մեզ որ մենք գործում ենք մեզ թշնամի ներկայ փչացած սերունդի գաւակների համար։

Ներկայ սերունդը մեզ գէմ է, մեր մտքերին թշնամի է,—բայց մենք պէտք է այնպէս անենք որ նոյն իսկ այդ մեզ թշնամի սերունդի գաւակները հասակ առնելով, մեր մտքերի կուսակիցներ դառնան։

Դա կը լինի մեր վարձը մեր աշխատանքի համար, դա կը լինի մեր վրէժը ներկայ սերունդից, մեր վերաբերութեամբ նրա անտարբերութեան և ատելութեան փոխարէն։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

Սեպտեմբերի 9-ին

Անձնական գործերիս պատճառով կարճ միջոց գանվելով Շամախի քաղաքում, այստեղի ազգային և եկեղեցական գործերը և հայ ժողովրդի պատակտեալ դրութիւնը ինձ վրա սքանչելի տպաւորութիւն գործեցին. նախ և առաջ մանելով ազգայոց թեմական ասված դպրանոցը, տեսայ այնտեղ մի քանի կոտրված նստարաններ՝ ուսումնարանի մութ և նեղ սենեակները աւելի յարմարութիւն ունեն գոմանոցի, քան թէ որ և իցէ դպրոցի. պատերի ծեփերը թափված, լուսամուտների ապակիքը փշրված և առաստաղները անձրևի սաստիկ կաթելուց բորբոսնած, որ ներս մտած ժամանակը խոնաւութիւնը և գոլորշին շնչարգել էին անում մարդու։ Սեպտեմբերի սկզբին, մինչդեռ պիտի սկսվէր դասատուութիւնը, մէկ նոր վարձած ուսուցչի ստիպմամբ սկսել էին նոր ծեփել ու ապիտակացնել պատերը, նստարանները նորոգել, լուսամուտներին ապակիք գցել և տանիքը կարկատել։ Օրիորդաց ուսումնարանի շինութիւնը, որ յատակագծից մի երկու արշին հաղիւ թէ բարձրացած է, դեռ անցեալ տարվանից մնում է այնպէս թերի դրութեան մէջ, և ոչ ոք չը կայ, որ սրբանց մտնելով և շարունակէ շինութիւնը։ Տեղիս եպիսկոպոսը, թէև քանի անգամ առաջարկութիւն է արել ժողովրդին այս մասին, բայց մի աջողակ հեռևանքի չէ հասել, և, ինչպէս պատմեցին ինձ, այդ շինութեան և նոյն իսկ օրիորդական վարժարանի հիմնադիր գործիչները բարձի թողի են արել ազգային գործերը։ Կիրակի օրեր պատարագի ժամանակ մի քանի անգամ մտայ Նորաշէն եկեղեցին, բայց ինչ ցաւալի տեսարան. այդ ահագին փառաւոր եկեղեցու մէջ հինգ մարդ չը կար և ինչպէս ասացի, միշտ այնպէս է լինում. ժամերգութիւնը յոյժ անախորժ էր և միանգամայն զուրկ ներդաշնակութիւնից։ Հայոց ժողովրդի մէջ արդարև նկատեցի կուսակցութիւնք, այդ կուսակցութիւնների մէկին պատկանում է Ս ինքը եպիսկոպոսը. թէ որ կողմն է ճշմարտութիւնը և որ կողմը անարդարութիւնը, հաստատ չեմ կարող ասել, միայն այսքան իմացայ, որ այդ կուսակցութիւնների պատճառով ազգային գործերը առաջ գնալ չեն կարող և միշտ ժողովուրդը յուզմունքի մէջ կը գանվի։ Երկսեռ դպրոցների ուսումնական առաջադիմութիւնը, ինչպէս ասում էին, շատ թոյլ ն՝ յետադէմ է եղել, մանաւանդ օրիորդաց վարժարանինը, ուր ութ ամսի միջոցում երեք զանազան մեթոդի ուսուցիչներ են փոխված։ Ե՞րբ կը լինի, որ մեր բարձրաստիճան հոգեւորականները զարթնէին քնից և ուշ դարձնէին ժողովրդի այժմեան ամենակարեւոր պահանջների վրա։ Եպիսկոպոսի հետ տեսակցութիւնս ժամանակ այդ ամեն տխուր իրողութիւնների մասին խօսակցութիւն արի, բայց ինչպէս նկատեցի. սրբազանի վրա իմ խօսքերը տպաւորութիւն չարին։ Մեղադրել եպիսկոպոսին այսպիսի ծանր և դժուար հանգամանքների մէջ չէ կարելի. նա գանվում է այժմ միանգամայն պայարված դրութեան մէջ. որքան և ցանկանալու լինի մտածել և գործել ժողովրդի բարոյական և մտաւոր զարգացման և առաջադիմութեան համար, այնու ամենայնիւ ոչինչ չէ կարող առաջացնել, որովհետև ժողովրդի մէջ հակառակ կուսակցութիւններ կան, որոնց հայեացքը և գաղափարը բոլորովին հակառակ են ժողովրդի այժմեան ձգտումներին և պահանջին, մանաւանդ որ ինքն էլ ծերացած և ծանրացած լինելով, շատ դժուար է նրան գործ կատարել։ Իսկ Շամախում ազգային և եկեղեցական գործերը վտանգաւոր դրութեան մէջ լինելով, անշուշտ հարկաւոր է նրան եռանդուն և գործունեայ անձն, որ կարողանայ բարեկարգել և պահպանել ժողովուրդը ու եկեղեցին։ Այս մասին դարձնում ենք Վեհափառ Հայրապետի առանձին ուշադրութիւնը։

Անցաւոր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մի քանի շաբաթ է արդէն որ այստեղ տիրում է տիֆ հիւանդութիւնը, որից մեռնում են ոչ միայն ազքատ մարդիկ, քայց և ունեոր անձինք, ամենայայտնի ընտանիքներից։ Մեռնում են նոյնպէս մանուկներ։ Ուշադրութիւն ենք դարձնում մեր դպրոցների և գիմնազիայի վարչութիւններին այն բանի վրա որ ուսումնարանում մանուկները բոլորն էլ խըմում են ջուր մի տակառից և մի բաժակից։ Ջուրը շատ անդամ լինում է պղտոր։ Մէկ տակառից և մի բաժակից ջուր խմելը ամենահատաստ միջոց է վարակիչ հիւանդութիւնները տարածելու։»

—

Խնդրում ենք մեր բաժանորդներին, որոնք մինչև այժմ իրանց պարտքը չեն վճարել «Մշակի» խմբագրութեանը, շուտով հայտնել մեզ թէ անցեալ և թէ այս տարվայ իրանց բաժանորդագինը։

—

Ստացանք մի նամակ Զարսկաստանի Դավրէժ քաղաքից, որի մէջ մեզ ասում են թէ Վիէննայի «Journal d'Orient» լրագրի հայոց օրգան դառնալը մեծ համակրութեամբ ընդունվեցաւ Զարսկաստանի հայերից։ Թղթակիցը յոյս ունի որ Դավրէժումն էլ կը գտնվեն բաժանորդներ այդ լրագրին։

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ գրում են. «Դեռ 1874 թուականից սկսած Աստրախան ունի Բարձրագոյն հաստատված եկեղեցական հոգաբարձութիւն։ Բայց դեռ 1859 թուականին, այդ հոգաբարձութիւնից առաջ, եկեղեցական գումարը, որ լինում է 84.000 բուբլի, կառավարելիս են լինում ժողովրդից ընտրված 12 գումարատէրեր, որոնցից գանձապետ նշանակվում է Ս. Գ. Զանումեանց։ Այդ թուականին հրատարակվում է հանգուցեալ Կայսրի անուանական հրամանը որ ասում է. «Բոլոր պայմանաւոր գումարները այսուհետև պէտք է դնվեն въ 4% непрерывную доходную кассу.» Հրամանի կանոնների մի յօդուածն ասում է. «Ցանկացողները կարող են իրանց գումարները դնել նշանակեալ ժամանակով և կամ յաւիտեան ժամանակ.» Եւ կանոնները աւելացնում են. «Վաստակաբերութիւնը 20 տարուց յետոյ կը յայտնի այդ տոմսակները յետ գնելու միջոցները. ВЫКУПЪ.» Զանումեանց այդ հրամանի հիման վրա, առանց հասարակութիւնից իրաւունք խնդրելու, վեր է առնում այդ 84.000 բուբլի ազքատների գումարը և դնում է յաւիտենական ժամանակով։ Նա առանց հասարակութեան կամքը ստանալու չունէր իրաւունք այդպէս վարվելու ազքատների գումարի հետ, որովհետև դրա հեռևանքն այժմ այն է, թէ նախ հասարակութիւնը բոլորովին զրկվում է հարկաւոր դէպքում իր գումարը յետ պահանջելու իրաւունքից, և երկրորդ մշտապէս զրկվում է տարեկան մի որոշեալ տոկոս ստանալուց։ Այժմ Զանումեան վախճանվել է։ Մինչ Աստրախանի հայ հասարակութիւնը չի սթափվի իր խոր քնից և օրէնքի հիման վրա չի պահանջի Զանումեանցի իր ժառանգներին թողած 2 միլիոն գումար կարողութիւնից իր ազքատների գումարը։»

—

Մի պարոն գրում է մեզ քաղաքային փոստով. «Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի վարչութեան մի սխալի կամ անհոգութեան վրա պէտք է ուշադրութիւն դարձնեմ. դա մարմնամարզութեան (գիմնաստիկայի) ուսուցիչ չունենալն է։ Այդ առարկան, ինչպէս յայտնի է, ոչ թէ միայն կազդուրում է մարմինը, բայց և փրկում է երիտասարդներից շատերին յայտնի դիպուածներում հաստատ մահից։ Գաւիթի վրա մի քանի գերաններ և ատղուզներ ունենալը, առանց գիմնաստիկայի կանոնաւոր դասատուութեան, ոչինչ նշանակութիւն չունի։»

—

Մեզ պատմում են թէ տէր Ղևոնդ Խաբազեանց, Ներսիսեան դպրոցի նախկին գանձապահ, վերջապէս խոստովանվել է թէ 3000 բուբլի գանձից վեր է առել և ծախսել է։ Ասում են թէ հոգաբարձութիւնը պարտաւորեցրել է տէր Հօրը ձրի ծառայել դպրոցին։ Մեր կարծիքով հոգաբարձութիւնը սխալ է գործել, որովհետև արժանապատիւ քահանան շատ անդամ չի յաճախի դասերին, ձրի լինելու համար, պատճառ բերելով, թ հարկէ, թէ այսօր թաղումն է, վաղը մեկրտութիւն է, միւս օր քելեխն է, յետոյ պըսակն է և այլն։ Աւելի նպատակայարմար կը լինէր ուրիշ միջոցներով պահանջել պակասած գումարը, քան թէ վնասի վրա կրկին վնաս աւելացնել։

—

Երևելի կատկովի լրագիրը, «Московскія Вѣдомости», որ ինչպէս միշտ սովոր է մատնութիւններ անել, օգուտ քաղեց Թիֆլիս քաղաքի կողմից հնագէտներին տուած ճաշի ժամանակ պրոֆէսոր Խվոլսոնի խօսած ճառից և տպեց իր էջերի մէջ հեռևեալ անմիտ հեռագիրը. «Խվոլսոն մի ճառ խօսեց, որտեղ ցանկացաւ հայերին քաղաքական ինքնագոյութիւն. լսվեցան չվոցներ և ուսներն ու վրացիները բացատրութիւն պահանջեցին Խվոլսոնից.» Այժմ լսում ենք թէ այդ հեռագրին պատասխանը արդէն ուղարկված է հեռագրական Միջազգային ընկերութեան ագէնտի ձեռքով։ Այդ պատասխանի մէջ ասված է որ Խվոլսոն քաղաքական ոչինչ նիւթի վրա չէ խօսացել, այլ խօսել է հայոց գրականութեան զարգացման վրա։

—

Լսում ենք որ պրոֆէսոր Վիրխով, Օդէսա գնալուց առաջ, պիտի մնայ մի քանի օր Սուխումի մէջ, որպէս զի ուսումնասիրի աբխազներին անտրոպոլոգիական կէտից։

—

ԲԱԳՈՒԻ մեր թղթակիցը գրում է մեզ. «Գու-